ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ N 315-Ա «10» 06 10թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից կատարվող ծախսերը կանոնակարգելու նպատակով՝ ՀՀ Կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի 8-րդ կետի բ/ ենթակետին համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2009 թ. դեկտեմբերի 12-ի N 4/4-3-15/77-8319 ու ՀՀ արդարադատության նախարարության 2010 թ. փետրվարի 17-ի N Ն 754 գրությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից կատարվող ծախսերի չափերը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման [illegible] վերապահել նախարարի տեղակալ Ա. Պողոսյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ОБЩИЙ ОТДЕЛ

Նախարարի տեղակալ՝ Ա. Պողոսյան
Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Ավետիսյան
Մշակ. ծրագրերի կառավ. և մոնիթորինգի վարչության պետ՝ Վ. Սուքիասյան
Մշակ. ծրագրերի կառավարման և մոնիթորինգի վարչության պետի տեղակալ՝ Գ. Նազարյան
Իրավաբանական և վերահսկողության վարչության պետ՝ Ա. Հայրապետյան
Խմբագիր՝
Կատ.՝ Թ. Սաղաթելյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության նախարարի
2010 թվականի 06. [illegible] N [illegible] հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՉԱՓԵՐԸ

	Մշակութային միջոցառումներ	Կատարվող ծախսերի չափերը
1.	**Արտասահմանյան պատվիրակությունների, հյուրերի, մշակույթի գործիչների ընդունելություն՝** 1) սննդի հետ կապված ծախս (օրական) 2) սուրճի ընդմիջման հետ կապված ծախս 3) պաշտոնական ճաշի հետ կապված ծախս 4) հյուրանոցային ծախս	կատարվում են՝ համաձայն ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի N1036-Ն որոշմամբ հաստատված չափերի
2.	**Տրանսպորտային ծառայությունների վճար՝** հատկացվող տրանսպորտային միջոցների թիվը որոշվում է՝ ելնելով պատվիրակության անդամների, միջոցառման մասնակիցների թվից՝ 1) պատվիրակության ղեկավարի համար՝ մեկ մարդատար ավտոմեքենա, 2) պատվիրակության անդամների, միջոցառման մասնակիցների համար՝ մինչև 10 անդամի դեպքում յուրաքանչյուր 3 անձի համար՝ մեկ մարդատար ավտոմեքենա կամ մեկ միկրոավտոբուս, 3) 10-ից ավելի անդամներ ունեցող պատվիրակության, միջոցառման մասնակիցների դեպքում՝ ավտոբուս (ուղևորատարողությունից ելնելով)	կատարվում են՝ համաձայն ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի N1036-Ն որոշմամբ հաստատված չափերի
3.	**Թարգմանական ծառայությունների վճար՝ մեկ թարգմանչի համար.** 5-ից ավելի անդամներ ունեցող պատվիրակության դեպքում՝ թարգմանիչների (ուղեկցող անձանց) թիվը պետք է որոշվի պատվիրակության 5-ից ոչ ավելի անդամների համար՝ մեկ թարգմանչի (ուղեկցողի) հաշվով	<u>մեկ ժամվա համար՝</u> - սովորական թարգմանություն՝ մինչև 6000 դրամ, - համաժամանակյա թարգմանություն՝ մինչև 22 000 դրամ
4.	**Հուշանվեր՝ հայկական խորհրդանիշով՝** 1) արտասահմանյան պատվիրակության ղեկավարի համար 2) հոբելյարի, փառատոնի և մրցույթի հաղթողների համար	մինչև 20 000 դրամ մինչև 8 000 դրամ
5.	**Հայաստան ժամանող պատվիրակության և մասնակիցների համար մշակութային ծրագրի կազմակերպում**	կատարվում են՝ համաձայն ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի N1036-Ն որոշմամբ հաստատված չափերի
6.	**Միջազգային և հանրապետական գիտաժողովի, ֆորումի, սեմինարի, փառատոնի, մրցույթի գովազդային նյութերի պատրաստում /համապատասխան խորհրդանիշով /լոգո/ դաջված**	մեկ անձի համար՝ մինչև 7 500 դրամ

	վերնաշապիկ, գլխարկ, պոլիէթիլենե պարկ, կրծքանշան, բեյջ, գրենական պիտույքներ/				
7.	**Ստեղծագործական և կազմակերպական անձնակազմերի հոնորար և աշխատանքի վարձատրություն՝**	*ըստ ժանրերի*			
ա/	***թատերական բեմադրության, համերգային ծրագրի ստեղծման՝***	***օպերա և բալետ*** /հազ. դրամ/	***դրամա-տիկ*** /հազ. դրամ/	***երաժշտա-կան-դրամատի կական, համույթ-ներ*** /հազ. դրամ/	***տիկնիկա-յին*** /հազ. դրամ/
	1) հեղինակ /սցենարի, պիեսի, լիբրետոյի, ստեղծագործության/	մինչև 1200.0	մինչև 1200.0	մինչև 1100.0	մինչև 800.0
	2) բեմադրող ռեժիսոր /դիրիժոր, խմբավար, բալետմայստեր/	մինչև 1400.0	մինչև 1200.0	մինչև 1100.0	մինչև 800.0
	3) բեմադրող նկարիչ	մինչև 1300.0	մինչև 1100.0	մինչև 1000.0	մինչև 700.0
	4) զգեստների նկարիչ	մինչև 1000.0	մինչև 800.0	մինչև 600.0	մինչև 350.0
	5) ռեժիսոր /դիրիժոր, խմբավար, բալետմայստեր, նկարիչ/	մինչև 420.0	մինչև 360.0	մինչև 300.0	մինչև 200.0
	6) ռեժիսորի ասիստենտ /օգնական/	մինչև 300.0	մինչև 260.0	մինչև 220.0	մինչև 150.0
	7) դասուսույցներ /վոկալի, պարի, խոսքի/, կոնցերտմայստեր /նվագակցող/	մինչև 250.0	մինչև 210.0	մինչև 170.0	մինչև 100.0
	8) երաժշտական ձևավորում		մինչև 500.0		մինչև 600.0
	9) կոնստրուկտոր, քանդակագործ	մինչև 500.0	մինչև 360.0	մինչև 300.0	մինչև 300.0
	10) նկարիչ - մուլտիպլիկատոր	մինչև 420.0	մինչև 360.0	մինչև 300.0	մինչև 220.0
	11) ձայնագրման, տեխնիկական ռեժիսոր	մինչև 300.0	մինչև 260.0	մինչև 220.0	մինչև 150.0
	12) հնչյունային /լուսային/ օպերատոր	մինչև 250.0	մինչև 200.0	մինչև 170.0	մինչև 100.0
	13) դերասաններ, արտիստներ	մինչև 500.0	մինչև 400.0	մինչև 400.0	մինչև 300.0
բ/	***թատերականացված տոնի, հոբելյանական երեկոյի, փառատոնի, մրցույթի, ստուգատեսի, միջոցառման իրականացման՝***				
	- ծրագրի /նախագիծ, սցենար/ հեղինակ, պրոդյուսեր	ամսական՝ մինչև 300.0 հազ. դրամ			
	- համակարգող /ղեկավար/	ամսական՝ մինչև 150.0 հազ. դրամ			
	-գործավար, քարտուղար	ամսական՝ մինչև 70.0 հազ. դրամ			
	- կազմակերպիչ, ժյուրիի անդամ	ամսական՝ մինչև 80.0 հազ. դրամ			
	- ռեժիսոր	ամսական՝ միչև 150.0 հազ. դրամ			
	- նկարիչ /դիզայներ/	մեկ միջոցառման գովազդային նյութերի դիզայն՝ ամսական մինչև 200.0 հազ. դրամ			
	- լուսանկարիչ	օրը՝ մինչև 30.0 հազ. դրամ			
	- սպասարկող անձնակազմ	մեկ անձի համար օրը՝ մինչև 5.0 հազ. դրամ			
գ/	***ուսուցողական ծրագրերի և վարպետության դասերի անցկացման՝*** -ուսուցիչ, վարպետ - մասնագետ	մեկ ժամվա համար մինչև 3500 դրամ			
8.	Արվեստի միջազգային և հանրապետական մրցույթների մրցանակներ՝ 1) միջազգային մրցույթի մրցանակներ՝	1-ին մրցանակ – մինչև 15 000 դոլ. համարժեք դրամ 2-րդ մրցանակ – մինչև 10 000 դոլ. համարժեք դրամ 3-րդ մրցանակ – մինչև 5 000 դոլ. համարժեք դրամ			

	2) հանրապետական մրցույթի մրցանակներ՝ 3) մանկապատանեկան մրցույթի մրցանակներ՝ 4) խրատուսական մրցանակներ՝	1-ին մրցանակ – մինչև 1500.0 հազ. դրամ 2-րդ մրցանակ – մինչև 750.0 հազ. դրամ 3-րդ մրցանակ – մինչև 500.0 հազ. դրամ 1-ին մրցանակ – մինչև 300.0 հազ. դրամ 2-րդ մրցանակ – մինչև 200.0 հազ. դրամ 3-րդ մրցանակ – մինչև 100.0 հազ. դրամ մինչև 100.0 հազ. դրամ
9.	**Ստեղծագործական կարողությունների զարգացում և խթանում՝** /երգիչ, դերասան, արտիստ, նկարիչ, ռեժիսոր/ - ճանապարհածախս, կեցություն, ուսման վարձ, անդամավճար	փոխհատուցվում է ընդհանուր ծախսի 60 -100 տոկոսը
10.	**Տպագրական ծախսեր՝** - բուկլետի պատրաստում - հրավիրատոմսի պատրաստում - պատվոգիր, դիպլոմ - ազդագիր - պաստառ -վահանակ	500-1000 օրինակ, 1 օրինակը՝ մինչև 1000 դրամ 1 հատը՝ մինչև 800 դրամ 1 հատը՝ մինչև 3000 դրամ 1 հատը՝ մինչև 2 000 դրամ 1 հատը՝ մինչև 60 000 դրամ 1 հատը՝ մինչև 150 000 դրամ
11.	**Գովազդային հոլովակի, լազերային սկավառակի պատրաստում**	փոխհատուցվում է ծառայության մատուցման պայմանագրին համապատասխան
12.	**Գրքի, կատալոգի հրատարակում**	փոխհատուցվում է ծառայության մատուցման պայմանագրին համապատասխան
13.	**Տեսաֆիլմի պատրաստում**	մինչև 30 րոպե տևողությամբ՝ մինչև 1300.0 հազ. դրամ
14.	**Ծաղիկների ձեռքբերում՝** - ծաղկեփունջ - ծաղկե զամբյուղ - ծաղկեպսակ	մեկ հատը՝ մինչև 10 000 դրամ մեկ հատը՝ մինչև 40 000 դրամ մեկ հատը՝ մինչև 50 000 դրամ
15.	**Դահլիճի, լուսածայնային և այլ սարքերի, սարքավորումների վարձակալություն**	փոխհատուցվում է ծառայությունների մատուցման պայմանագրերին համապատասխան
16.	**Ֆուրշետի կազմակերպում՝ կապված արտասահմանյան պատվիրակությունների ու հյուրերի Հայաստանում ընդունելության, հոբելյանների, միջազգային և հանրապետական նշանակություն ունեցող մշակութային միջոցառումների անցկացման հետ**	մեկ անձի համար՝ մինչև 3 000 դրամ

ՀՀ մշակույթի նախարարության
աշխատակազմի ղեկավար Ս. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն N 351-Ա **«22»«06» 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 315-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2010 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից կատարվող ծախսերի մասին» N 315-Ա հրամանի հավելվածի 7-րդ կետի «բ» և «գ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

բ/	***թատերականացված փոնի, հոբելյանական երեկոյի, փառատոնի, մրցույթի, սպուգատեսի, միջոցառման իրականացման՝***	
	- ծրագրի /նախագիծ, սցենար/ հեղինակ, պրոդյուսեր	ամսական՝ մինչև 400.0 հազ. դրամ
	- համակարգող /ղեկավար/	ամսական՝ մինչև 200.0 հազ. դրամ
	-գործավար, քարտուղար	ամսական՝ մինչև 100.0 հազ. դրամ
	- կազմակերպիչ, ժյուրիի անդամ	ամսական՝ մինչև 110.0 հազ. դրամ
	- ռեժիսոր	ամսական՝ մինչև 200.0 հազ. դրամ
		մեկ միջոցառման գովազդային

	- նկարիչ /դիզայներ/ - լուսանկարիչ - սպասարկող անձնակազմ	նյութերի դիզայն՝ ամսական մինչև 270.0 հազ. դրամ օրը՝ մինչև 40.0 հազ. դրամ մեկ անձի համար օրը՝ մինչև 6.6 հազ. դրամ
գ/	***ուսուցողական ծրագրերի և վարպետության դասերի անցկացման՝*** - ուսուցիչ, վարպետ - մասնագետ	մեկ ժամվա համար՝ մինչև 4500 դրամ

»:

2. Սույն հրամանի դրույթները տարածվում են 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ա. ԱՄԻՐՅԱՆ

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010,011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 2173-Հ/2 25 11 2022 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 315-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2010 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից կատարվող ծախսերի մասին» N 315-Ա հրամանի հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

1.1.Արտասահմանյան պատվիրակությունների, հյուրերի, մշակույթի գործիչների ընդունելություն՝ 1) սննդի հետ կապված ծախս (օրական) 2) սուրճի ընդմիջման հետ կապված ծախս 3) պաշտոնական ճաշի հետ կապված ծախս 4) հյուրանոցային ծախս	կատարվում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի N 1036-Ն որոշմամբ հաստատված չափերի
1.2. Հայաստանյան պատվիրակությունների, մշակույթի գործիչների, արվեստագետների, ստեղծագործողների մասնակցություն արտասահմանյան միջոցառումներին՝ 1) օրապահիկ կամ սննդի հետ կապված ծախս 2) գիշերավարձ կամ հյուրանոցային ծախս	կատարվում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված չափերի *(սննդի հետ կապված ծախսերի և հյուրանոցային ծախսերի համար սահմանվող չափերն ընդունվում են օրապահիկի և գիշերավարձի համար սահմանված ծախսերի չափերին*

	հավասար)
1.3. Պատվիրակությունների, մշակույթի գործիչների, արվեստագետների, ստեղծագործողների մասնակցություն հայաստանյան միջոցառումներին՝ 1) օրապահիկ կամ սննդի հետ կապված ծախս 2) գիշերավարձ կամ հյուրանոցային ծախս	կատարվում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված չափերի *(սննդի հետ կապված ծախսերի և հյուրանոցային ծախսերի համար սահմանվող չափերն ընդունվում են օրապահիկի և գիշերավարձի համար սահմանված ծախսերի չափերին հավասար)*

»:

2. Սահմանել, որ մինչև սույն հրամանի ուժի մեջ մտնելը գործողության մեջ գտնվող պայմանագրերի համար օրապահիկը կդիտարկվի որպես սննդի ծախս (և հակառակը), իսկ գիշերավարձը՝ որպես հյուրանոցային ծախս (և հակառակը):

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211